ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
"ASSESSMENT AND TESTING CENTER"
STATE NON TRADE ORGANIZATION

ՀՀ, ք. Երևան, 0025,Չայլախյան 4
Հեռ. 010 57 63 37,
E-mail: info@atc.am

Chaylakhyan str. 4,Yerevan, 0025, RA
Tel. +374 10 57 63 37,
E-mail: info@atc.am

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի «Ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը հաստատելու մասին» թիվ 596-Ն որոշման հավելվածի 64-րդ, 67-րդ կետերը, Գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի 2024թ. նոյեմբերի 14-ի թիվ 230-Ա հրամանը՝ 2024թ. նոյեմբերի 16-ին «Մաթեմատիկա», «Ֆիզկուլտուրա», «Շախմատ» և նոյեմբերի 17-ին «Ֆրանսերեն», «Գերմաներեն», «Հայոց լեզու» առարկաների ուսուցիչների կամավոր ատեստավորման առարկայական բողոքարկման հանձնաժողովների կազմը հաստատելու մասին՝ բողոքարկման հանձնաժողովների կողմից /բացառությամբ «Ֆրանսերեն» առարկայի, որից ատեստավորման արդյունքների բողոքարկում չի եղել և հետևաբար բողոքարկման հանձնաժողով չի ձևավորվել / նիստեր են հրավիրվել 2024թ. նոյեմբերի 25-ին և նոյեմբերի 27-ին, և ընդունվել են հետևյալ որոշումները.

1. «Մաթեմատիկա» առարկայի առաջադրանքների բողոքարկման արդյունքում ուսումնասիրվել են բողոքարկումները, ատեստավորվողների միավորները պահպանվում են:
2. «Գերմաներեն» առարկայի առաջադրանքների բողոքարկման արդյունքում ուսումնասիրվել են բողոքարկումները, ատեստավորվողների միավորները պահպանվում են:
3. «Շախմատ» առարկայի առաջադրանքների բողոքարկման արդյունքում ուսումնասիրվել են բողոքարկումները, ատեստավորվողների միավորները պահպանվում են:
4. «Հայոց լեզու» առարկայի հետևյալ առաջադրանքում բոլոր այն ատեստավորվողների արդյունքին, որոնք ընտրել են 8-րդ շարքը, ավելացվում է 1 միավոր.

«Նշել այն 3 շարքերը, որոնցում տրված ածանցը կարող է բոլոր բառերի արմատներին (արմատներից մեկին) միանալ և բառ կազմել՝ առանց երկրորդ ածանցի: *(3 միավոր)*

1. ***-ան*** – կծվահամ, այունաշար, կախազարդ
2. ***-ին*** – հեշտագին, դյուրահավատ, վերադարձ
3. ***-ք*** – կետադրություն, կրծոսկր, կրագույն
4. ***-ուրդ*** – պարապմունք, խառնարան, արտահագուստ
5. ***-որդ*** – մրցավար, բաժանմունք, լողազգեստ
6. ***-ուկ*** – կապտականաչ, բամբակաշատ, թզաչափ
7. ***-իկ*** – տարկետում, մանրադրամ, հեզաշշուկ
8. ***-ուտ*** – մազաթափ, խավարտ, բրդատու
9. ***-ում*** – ուսանող, ինքնաշարժ, ուխտադրուժ»:

4.1. «Հայոց լեզու» առարկայի այլ առաջադրանքների բողոքարկումների արդյունքում միավորները պահպանվում են:

5. «Ֆիզկուլտուրա» առարկայի վերաբերյալ.

5.1. հետևյալ առաջադրանքը չունի միանշանակ ճիշտ պատասխան, սույն առաջադրանքից միավոր չստացած ատեստավորվողներին տալ մեկական միավոր.

«Որն է համարվում արագաշարժության մշակման համար առավել օպտիմալ տարիքը:*(1 միավոր)*

1) 7-9
2) 11-12
3) 13-14
4) 15-16»:

5.2. Հետևյալ առաջադրանքի համար 1, 5, 7, 8 շարքերից ցանկացած 3-ն ընտրելու դեպքում ատեստավորվողներին տալ 3 միավոր, եթե ընտրել են ցանկացած 2-ը՝ տալ 2 միավոր, եթե ընտրել են ցանկացած 1-ը՝ 1 միավոր.

«Տրված պնդումներից 3-ը սխալ են: Նշել դրանց համարները: *(3 միավոր)*

1. Ֆիզկուլտուրային պարապմունքները նպատակահարմար է սկսել սնունդ ընդունելուց 1-1.5 ժամ հետո:
2. Ընտանիք-դպրոց համագործակցությունը երեխաների ֆիզիկական դաստիարակության արդյունավետության կարևոր պայմաններից է:
3. Դպրոցականների ճկունությունը գնահատելու համար կիրառվում է կանգնած դրությունից թեքում առաջ թեստային վարժությունը:
4. Զինվորական ծառայության նախապատրաստման համար պատանիների ֆիզիկական պատրաստվածության բարելավումը դպրոցական ֆիզիկական դաստիարակության խնդիրներից է:
5. Ցատկափոսի ավազի փխրեցումը մանկավարժորեն արդարացված ժամանակի բաղադրիչներից է:
6. Մեթոդական տեսանկյունից խաղահրապարակի չափերի փոփոխությունը հետապնդում է բեռնվածության կարգավորման նպատակ:
7. Սրտի կծկումների հաճախականությունը ինքնազգացողության օբյեկտիվ չափանիշ չէ:
8. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից տնային առաջադրանքներ չեն հանձնարարվում»:

5.3. «Ֆիզկուլտուրա» առարկայի այլ առաջադրանքների բողոքարկումների արդյունքում միավորները պահպանվում են: